Santé Arménie

Գիտաժողով
«Սանտե Արմենի»-ն և հոգեկան առողջությունը

2025թ. հոկտեմբերի 25

UGAB-ի կենտրոն, Մելիք Ադամյան փ. 2/2, 0010 Երևան

Միջոցառումը կազմակերպվել է Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության աջակցությամբ

Նվիրված է «Կլինիկական հոգեբանություն» հանդեսին, որը խմբագրում է Օլիվիե Դուվիլը: 2025 թ. հոկտեմբերին լույս տեսած համարը վերաբերում է Հայաստանին և վերնագրված է՝ «Հայկական վիճակը. պատմություն, մշակույթ և հումանիտար գիտություններ»:

(Պատասխանատուներ՝ Պատրիկ Ալեսյան և Անահիտ Դասսյու Տեր-Մեսրոպյան)

Մուտքն անվճար է, օրվա գրանցումը հետևյալ էլ հասցեով. patil.kechichian@santearmenie.org

Zoom հղում : https://us02web.zoom.us/j/81691967325?pwd=Zryyv3bM5wS9Xy28nQsl1k9rmtbfbl.1

ID de réunion: 816 9196 7325 Code secret: 645530

Առավոտյան նիստ

9h00 . Ընդունելություն / սուրճ

9h15 – 10h00 : **Բժիշկ Պատրիկ Ալեսյան**. « Գրելը. ակնթարթ, երբ անցյալն ու ապագան միանում են՝ դառնալով կյանքի հետք »

Բժիշկ Լորանս Տերզան. « Հոգեբանությունը և հայ քաղաքացին. բացահայտել ազատագրելու համար »

Մոդերատորներ. Անահիտ Դասսյո Տեր-Մեսրոպյան և Իռեն Նիգոյյան

10h00 – 11h00 : **Նազենի Գարիբյան**. «Հայաստանի մշակույթն ու ինքնությունը . բազմազանություն մեկ դեմքով»

Ալեն Նավարա-Նավասարտյան. «Մտածել պարտության մասին. 44-օրյա պատերազմը և ֆրանսահայ սփյուռքը»

Մոդերատորներ. Պատրիկ Ալեսյան և Խաչատուր Գասպարյան

11h00 – 11h15. *Դադար*

11h15 – 12h30 : **Պրոֆ. Խաչատուր Գասպարյան**. «Հայկական տրավմայի արմատները»

Ժանին Ալթունյան. «Տրավմատիկ ժառանգությունը հնարավոր է մշակել միայն այն երկրի մշակույթի և լեզվի մեջ, որը ապաստան է տալիս փրկվածներին»

Մոդերատորներ. Իռեն Նիգոյյան և Անահիտ Դասսյո Տեր-Մեսրոպյան

12h30 – 14h00 . *Ճաշի ընդմիջում (բուֆետ)*

Օրվա երկրորդ կես

14h00 – 15h15 : **Խնամքի ցանցերը Սյունիքում և Արարատյան դաշտում**

- Արարատյան դաշտ. **Անահիտ Լալայան / Բժ. Հակոբ Հակոբյան** : « Հոգեբանական ծառայությունների կառուցվածքը և զարգացումը Լեռնային Ղարաբաղից սկսած՝ արտագաղթածների մոտ »
- Գորիս/Սիսիան. **Գայանե Հայրապետյան**, հոգեբան : « Պատանիների խմբերի հետ աշխատանքը Գորիսում »
- Կապան/Քաջարան. **Զարինե Հարությունյան**, կլինիկական հոգեբան, հոգեթերապևտ. « Աշխատանք երեխաների, մեծահասակների և վշտացած ընտանիքների հետ »

Մոդերատորներ. Միրանուշ Հակոբյան և Կատրին Սալադին

15h15 – 16h00 : **Իռեն Նիգոյյան.** « Հոգեվերլուծության ծնունդն ու զարգացումը Հայաստանում. բացակա հոր որոնումը՞ »

Անահիտ Դասսու Տեր-Մեսրոպյան. « Սահմաններ և ինքնություն, ներս և դուրս. ի՞նչ ազդեցություններ »

Մոդերատորներ. Արթուր Տոնոյան, Կատրին Սալադին

16h00 – 16h15 *: Դադար*

16h15 – 17h00 : **Հմտությունների փոխանցում և ցանցային աշխատանք**

- Ընդհանուր բժշկության շարժական խմբեր և նոր մանկական վերականգնողական կենտրոն Գորիսում. մոտիկ բուժօգնություն և բազմամասնագիտական ցանցի կառուցում
- **Բժ. Հակոբ Խաչյան**. « Փորձնական ծրագրի ներկայացում՝ կենտրոնացած կնոջ առողջության վրա. սրտանոթային և գինեկոլոգիական զննումներ»
- **Սյուզաննա Շալունց**, լոգոպեդ : «Երբ մանկությունը կախված է ախտորոշումից» – Գորիսի նոր մանկական վերականգնողական կենտրոնի ներկայացում

Մոդերատորներ. Արմեն Սողոյան և Պատրիկ Ալեսյան

Եզրափակումներ. Պատրիկ Ալեսյան, Անահիտ Դասսյո Տեր-Մեսրոպյան, Իռեն Նիգոլյան

Օրվա փակման համերգ

Մենահամերգ՝ երիտասարդ վետերան Հովհաննես Առաքելյանի կողմից

Բանախոսների ցանկը՝ հաջորդ էջում

Տեղեկություն մասնակիցների վերաբերյալ՝

- **Բժ. Պատրիկ Ալեսյան** – Հոգեբույժ, մանկական հոգեբույժ, հոգեվերլուծաբան: Փարիզի Հոգեվերլուծական միության անդամ: 2007-2017 թթ. եղել է Վալ դը Մարնի Դեռահասների տան համակարգող բժիշկը: Նախկինում եղել է նաև Օ-դը-Սենի Դեռահասների տան համակարգող բժիշկ: Աշխատել է Արդարադատության նախարարության Երիտասարդության դատական պաշտպանության (PJJ), ապա՝ «Ընտանեկան խորհրդատվություն՝ մանկության և պատանեկության խնդիրների վերաբերյալ» բաժնում, և այնուհետև՝ Արդարադատության նախարարությունում որպես տեխնիկական խորհրդական: «Ախթամար Քվարտետ» միջազգային դասական քառյակի նախագահ: «Սանտե Արմենիե» ի հոգեբանական տրավմայի թիմի համաղեկավար :

- **Ժանին Ալթունյան** – գերմանաբան, էսսեիստ և թարգմանիչ: Նա մասնավորապես պատասխանատու է եղել Ֆրոյդի ամբողջական աշխատությունների խմբագրական խմբում համահունչեցման համար, որոնք հրատարակվել են Ֆրանսիայի Համալսարանական Հրատարակչության կողմից: Իր բազմաթիվ գրքերում, հոդվածներում և ելույթներում նա վկայում է իր անձնական և ընտանեկան պատմության մասին, որը ձևավորվել է 1915թ. ցեղասպանությամբ: Նա մշտապես ներգրավված է եղել այդ ժառանգության վկայության մեջ՝ առանձնահատուկ «վերլուծյալի» գրելու ձևով: 1997թ. « Մարդկության դեմ հանցագործությունների և ցեղասպանությունների ուսումնասիրության համար միջազգային ասոցիացիայի» (Aircrige) հիմնադիր անդամներից մեկն է :
- **Անահիտ Դասսյու Տեր Մեսրոպյան** – կլինիկական հոգեբան, հոգեվերլուծաբան, «Էսպաս անալիտիկ Փարիզ»-ի անդամ, ուսուցման հանձնաժողովի քարտուղար, վարչական խորհրդի և գրասենյակի անդամ: Պատվավոր պահեստազորի ծառայող՝ Ֆրանսիայի Զինված ուժերի Առողջապահական ծառայությունում, Պերսի զինվորական հոսպիտալում (Կլամար), Ֆիզիկական բժշկության և վերականգնողական բաժնում՝ 2012 թվականից: «Սանտե Արմենի»-ի հոգեբանական տրավմայի թիմի համաղեկավար:
- **Նազենի Գարիբյան** – Արվեստաբանության դոկտոր, Սորբոնի Համալսարանի Գործնական Բարձրագույն Ուսումնական Տեղ, Պատմական և լեզվաբանական գիտությունների բաժին, դոկտորական դպրոց, Փարիզ:Միջնադարյան արվեստի բաժնի տնօրեն, Հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարան» և ասոցացված պրոֆեսոր Հայաստանի Գեղարվեստի ազգային ակադեմիայում:Հայաստանի մշակույթի նախկին փոխնախարար:

Տեղեկություն մասնակիցների վերաբերյալ՝

- **Պրոֆ. Խաչատուր Գասպարյան** – կլինիկական հոգեբանության դոկտոր, Երևանի Մ. Հերացու անվան Պետական բժշկական համալսարանի բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ: «Սեդա Ղազարյան» հոգեկան առողջության հիմնադրամի / «Ինտրա» հոգեկան առողջության կենտրոնի կլինիկական տնօրեն, Երևան:
- **Բժ. Սիրանուշ Հակոբյան** – մանկահոգեբույժ, հոգեվերլուծաբան, ՀՀ առողջապահության նախարարի խորհրդական՝ մանկական և պատանեկան հոգեբուժության գծով: ՀՀԱ (Հայկական ասոցիացիա հոգեվերլուծության) փոխնախագահ և Շվեյցարիայի Հոգեվերլուծողների միության թեկնածու:
- **Զարինե Հարությունյան** – կլինիկական հոգեբան, հոգեթերապևտ Կապանի բժշկական կենտրոնում: Հոգեբանության դասախոս Եվրոպական համալսարանի Կապանի մասնաճյուղում: Երեխայի զարգացման և վերականգնման մասնագետ («Արաբկիր» բժշկական կենտրոն, 2013 թ.):
- **Գայանե Հայրապետյան** – հոգեբան, Հոգեբան Գորիսում: Հոգեբանության դասախոս Գորիսի համալսարանում:
- **Բժ. Հակոբ Խաչյան** – ընտանեկան բժիշկ, Շարժական թիմերի և «Սանտե Արմենի»-ի շտապ բուժօգնության ծրագրերի համակարգող Սյունիքում:
- **Բժ. Սևան Մինասյան** – Մանկական հոգեբույժ Փարիզում, հոգեվերլուծաբան, Ընտանեկան թերապևտ, հիվանդանոցային բժիշկ Փարիզի Կոշեն հիվանդանոցում, «Դեռահասների տուն – Մեզոն դը Սոլեն», Փարիզի քաղաքային համալսարան: Ասոցիացված հետազոտող Ֆրանսիայի Առողջապահության և բժշկական հետազոտությունների ազգային ինստիտուտում (INSERM), CESP, Team DevPsy, Փարիզ-Սակլե համալսարան – UVSQ: «L'autre» հանդեսի գլխավոր խմբագիր: «Սանտե Արմենի»- ի հոգեբանական տրավմայի թիմի համաղեկավար:
- **Ալեն Նավարա-Նավասարտյան** – Արվեստի պատմության դոկտոր, սոցիոլոգիայի դոկտոր: Անկախ հետազոտող: HYESTART հիմնադրամի նախագահ, որն իր գործունեությունը իրականացնում է Հարավային Կովկասում և Թուրքիայում:
- **Բժ. Իռեն Նիգոլյան** – Հոգեբույժ, FMH մասնագիտացում ունեցող մեծահասակների և երեխաների/պատանիների հոգեբուժության և հոգեթերապիայի գծով: Հոգեվերլուծաբան, Շվեյցարիայի հոգեվերլուծության միության և ՄՀԸ-ի (IPA) դասավանդող անդամ: «Սանտե Արմենիե» ի հոգեբանական տրավմայի թիմի համաղեկավար:
- **Կատրին Սալաղին** – Կլինիկական հոգեբան, հոգեվերլուծաբան, «Էսպաս անալիտիկ Փարիզ»-ի անդամ, «Էսպաս անալիտիկ»-ի փոխնախագահ, աշխատել է մանկահոգեբուժության ոլորտում 40 տարի: Ընդունելության հանձնաժողովի քարտուղար: Վարչական խորհրդի և գրասենյակի անդամ: «Enfances en jeu» միավորման անդամ:

Տեղեկություն մասնակիցների վերաբերյալ՝

- **Սյուզաննա Շալունց** – Լոգոպեդ Գորիսի մանկական վերականգնողական կենտրոնում:
- **Պրոֆ. Արմեն Սողոյան** – Բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր, հոգեբույժ, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ասոցացված պրոֆեսոր: Հայաստանի հոգեբուժության ասոցիացիայի և Հայաստանի բժշկական ասոցիացիայի նախագահ: Ներկայումս աշխատում է որպես գիտական ղեկավար հոգեսոցիալական վերականգնման կենտրոնում: «Հայկական հոգեկան առողջություն» հանդեսի գլխավոր խմբագիր: Բժիշկ Սողոյանը Հոգեբույժների համաշխարհային ասոցիացիայի (WPA) պատվավոր անդամ է:
- **Բժ. Լորանս Տերզան** – ETI - «Expertise France» / Եվրոպայի և արտաքին գործերի նախարարություն: Լորանս Տերզանը բժիշկ է և ներկայումս բնակվում է Հայաստանում, որտեղ պաշտոնավարում է որպես Ֆրանսիայի Եվրոպայի և արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ՝ Հայաստանի առողջապահության նախարարի խորհրդական: Նրա հանրային առողջապահության մասնագիտական գործունեությունը հաճախ նրան տարել է արտասահման, այդ թվում՝ ԱՀԿ (կենտրոնական գրասենյակ), սակայն նա միշտ պահպանել է հետաքրքրություն կլինիկական պրակտիկայի նկատմամբ՝ մասնավորապես որպես շտապօգնության բժիշկ: Լիոն 3 համալսարանում գիտության փիլիսոփայության մագիստրատուրան ավարտելուց հետո, այս տարի ավարտում է դոկտորանտուրան Գործնական Բարձրագույն Ուսումնական Տեղում (EPHE):
- **Արթուր Տոնոյան** – Կլինիկական հոգեբան, հոգեվերլուծաբան Նուբարաշենի հոգեբուժական հիվանդանոցում: ՀԱՀՄ (Հայաստանի հոգեվերլուծության ասոցիացիա) տնօրեն: